Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2025 թվականի հունիսի 3-6-ը Թաիլանդի Թագավորություն (մայրաքաղաք Բանգկոկ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

   Քրիստինե Ղալեչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Թաիլանդի Թագավորություն (Քաղաք Բանգկոկ), 2025թ. հունիսի 3-6-ը

4. **Հրավիրող կողմը.**

   ՄԱԿ-ի Ասիայի և Հեռավոր Արևելքի տնտեսական հանձնաժողով (ECAFE)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Մասնակցություն Ասիական մայրուղիների ցանցի աշխատանքային խմբի 11-րդ հանդիպմանը

6. **Քննարկված թեմաները.**

   Ասիական մայրուղիների աշխատանքային խմբի տասնմեկերորդ երկամյա հանդիպումը գումարվել է Ասիական մայրուղիների ցանցի մասին միջկառավարական համաձայնագրի 7(2) հոդվածի համաձայն, որտեղ նշանակվել եմ աշխատանքային հանդիպման նախագահող, ղեկավարելով աշխատանքային խմբի 11-րդ հանդիպման աշխատանքները:

   Հանդիպման հիմնական օրակարգային հարցերն էին՝

   - Ասիական մայրուղիների ցանցի վերաբերյալ միջկառավարական համաձայնագրի կարգավիճակի քննարկումը,
   - Ասիական մայրուղիների ցանցի շահագործման հետ կապված քաղաքականությունն և դրա հետ փոխկապակցված հարցերը,

- Ասիական մայրուղիների ցանցի վերաբերյալ միջկառավարական համաձայնագրում փոփոխություններ կատարելու առաջարկների քննարկումը,
- Ասիական մայրուղիների ցանցի օգտագործումը գլոբալ և տարածաշրջանային մատակարարման շղթաների թվայնացմանը և ապաածխածնացմանը աջակցելու համար,
- Աշխատանքային խմբի 11-րդ նիստի աշխատանքների ամփոփումն ու զեկույցի ընդունումը:

Աշխատանքային խումբը քննարկել է նաև Ասիական մայրուղիների ցանցի շահագործման հետ կապված ռազմավարական հարցերի և խնդիրների վերաբերյալ հաշվետվությունը: Ներկայացված հաշվետվությամբ աշխատանքային խմբի քարտուղարությունը տեղեկատվություն է տրամադրել Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ճանապարհային տրանսպորտի զարգացման ընդհանուր միտումների վերաբերյալ և ընդգծել Ասիական մայրուղիների ցանցի շահագործման հետ կապված հարցերը: Առաջարկվել է քննարկել ցանցի շրջանակներում ենթակառուցվածքային և գործառնական կապի հարցերը, ներառյալ Միջազգային ճանապարհային տրանսպորտի խթանման տարածաշրջանային ռազմավարական հարցերը, ինչպես նաև այլ առաջնահերթ հարցեր: Համաձայնագրի կողմերին և Աշխատանքային խմբի մյուս անդամներին առաջարկվել է քննարկել՝ Ասիական մայրուղիների ցանցի շարունակական կայուն զարգացման և շահագործման հետ կապված ազգային, երկկողմ կամ ենթատարածաշրջանային ծրագրերը, գործունեության և զարգացումների մասին հարցերը: Առաջարկվել է հատուկ ուշադրություն դարձնել Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ցամաքային զարգացող երկրների կարիքներին և առաջնահերթություններին, որոնք մեծապես կախված են միջազգային ճանապարհային տրանսպորտից:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հայաստանի Հանրապետության պատվիրակության կողմից ներկայացվել է զեկույց ՀՀ ենթակառուցվածքների զարգացման միտումների, առկա ծրագրերի, մարտահրավերների, թվային գործիքների ներդրման վերաբերյալ, ներկայացվել է նաև ՀՀ կառավարության կողմից առաջնահերթություն համարվող «Խաղաղության խաչմերուկ» ծրագիրը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

11-րդ նիստում Աշխատանքային խումբը քննարկել և ընդունել է Ասիական մայրուղային ցանցի մասին միջկառավարական համաձայնագրի I հավելվածի փոփոխությունները (տե՛ս ESCAP/AHWG(10)/6):

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

17.06.2025թ.